

Հասմիկ Ա. Եղիազարյան
Բանաս. գիյր. թեկնածու

ԵՎՐՈՊԱՅԻ ՎԵՐՋԻՆ ՄԵԾ ՄՏԱԾՈՂԸ

Ումբերտո Էկոյի հիշատակին*

Բանալի բառեր – Ումբերտո Էկո, միջնադար, պոստմոդերնիզմ, ինտերտեքստուալություն, հեգնանք, ԶԼՄ, բեսթսելեր:



2016 թ. փետրվարի 19-ին կյանքից հեռացավ իտալացի ակնավոր փիլիսոփա, նշանագետ, գրականագետ, գրող Ումբերտո Էկոն՝ թողնելով բազմաթիվ գիտական աշխատություններ, դասագրքեր, վեպեր, հոդվածներ: Եվ չնայած նա ժամանակի ոչ միայն ամենահայտնի, այլև ամենակարդացվող, ամենատպագրվող, ամենաքննարկվող, բազմաթիվ մրցանակներ ստացած հեղինակներից էր, միայն այսօր՝ նրա մահից հետո, փորձելով ամփոփել նրա ժառանգությունը, սկսում ենք գիտակցել, թե որքան բազմազան ու մեծածավալ է այն: Ումբերտո Էկոյի գիտական աշխատությունների քանակը դժվար է հստակ նշել նաև այն պատճառով, որ դրանք բազմիցս լրամշակվել, երբեմն նաև թարգմանվել են հեղինակի կողմից ու վերահրատարակվել:

«Հետևել Ումբերտո Էկոյի կյանքին նշանակում է վերստեղծել մեր երկրի մշակութային կյանքի մի կարևորագույն մասը»¹,– նշում է իտալական “Corriere della sera” թերթի խմբագրությունը, որի հետ Էկոն աշխատել է երկար տարիներ: Փորձենք Էկոյի գործերի և կյանքի որոշ դրվագների միջոցով կարճ ճանապարհորդություն կատարել մշակութային Իտալիայով:

Այսպես, Պիեմոնտի շրջանի փոքրիկ քաղաք Ալեսանդրիայում 1932 թվականին ծնված Ումբերտո Էկոյի մանկությունն անցնում է ֆաշիստական քսանամյակի մթնոլորտում: Իր առաջին գրական մրցանակը Էկոն ստացավ 1943 թվականին՝ իտալացի դպրոցականների համար կազմակերպված “Ludi Juveniles” օլիմպիադայում «Ինչու՞ պետք է մեռնել հանուն Մուսոլինիի և Իտալիայի անմահ փառքի» վերնագրով շարադրության համար: Այս տարիների հիշողություններին և ֆաշիզմի քննադատությանը հեղինակը բազմիցս անդրադառնալու է իր գործերում:

Կրթաթոշակ ստանալով Թուրինի համալսարանում՝ ուսանողական տարիների

*Ընդունվել է տպագրության 10.03. 2016:

¹ http://www.corriere.it/cultura/16_febbraio_20/morto-umberto-eco-6a6c8fac-d760-11e5-a4d1-c8704a1e2204.shtml

Ը (ԺԳ) փարի. թիվ 1 (53) հունվար-մարտ, 2016
 ՎԿՎ համահայկական հանդես

ընթացքում հեղինակը անդամակցում է մի քանի միլիոն անդամ ունեցող կաթոլիկ երիտասարդական կազմակերպությանը՝ “GIAC”-ին, գրավում կարևոր պաշտոն, սակայն ղեկավարության հետ ունեցած անհամաձայնությունները նրան ստիպում են հեռանալ կազմակերպությունից:

1954-ին Էկոն գրում է Թովմա Աքվինացուն նվիրված ավարտական թեզ: Այս աշխատությունը որոշ առումով կանխորոշում է նրա հետագա գիտական և գրական գործունեության հիմնական ուղղություններից մեկը՝ միջնադարագիտությունը. «Միջնադարն իմ առօրյան է»², գրում է Էկոն «Գրառումներ «Վարդի անուն»-ի լուսանցքներում» գրքայկում: Եվ ճակատագրի հեգնանքով հենց կաթոլիկ եկեղեցու այս հայրերից մեկի շնորհիվ է, որ նա հեռանում է քրիստոնեական հավատքից, դառնում աթեիստ. «Կարելի է ասել, որ նա՝ Թովմա Աքվինացին, ինձ հրաշալի կերպով բուժեց հավատքից»³: Մրա մասին է վկայում նաև նրա աշխարհիկ հուղարկավորման արարողությունը:

Այսուհանդերձ, Էկոն աստվածաբանության մեծ գիտակ էր, միշտ էլ պահպանում էր հարգանքը եկեղեցու նկատմամբ և կարծում էր, որ այն պետք է անտարբեր չմնա, ավելին՝ ակտիվորեն մասնակցի երկրում կատարվող փոփոխությունների, բարոյական խնդիրների քննարկմանը: Չափազանց հետաքրքրական է այս առումով Էկոյի և կարդինալ Մարտինիի նամակագրությունը, ուր երկու մտավորականները քննում են մի շարք բարոյափիլիսոփայական խնդիրներ, մեկը՝ որպես հոգևորական, մյուսը՝ աթեիստ: Կաթոլիկ լրատվամիջոցներից մեկի հետ հարցազրույցում, ի պատասխան այն ակնարկի, որ հազիվ թե նրան ներս թողնեն դրախտ, Էկոն կատակում է. «Ես ճանաչում եմ Աստծուն, մենք կարդացել ենք նույն գրքերը, ու բացի այդ՝ ես սուրբ Թովմայի բարեկամն եմ ... Մենք հին ընկերներ ենք, հո ինձ դրսում չէն թողնի»⁴:

Այսպես, իրենց հետքը թողնելով, նրա համար հետևում են մնում երկու գաղափարախոսություն՝ ֆաշիզմն ու կաթոլիկ հավատքը:

Համալսարանից անմիջապես հետո Էկոն սկսում է ակտիվորեն մասնակցել երկրի մշակութային կյանքին, դրա ձևավորմանն ու ուսումնասիրությանը: Հաղթելով համապատասխան մրցույթում՝ նա մուտք է գործում հեռուստատեսություն: 1954-1959 թվականներին աշխատում է RAI հեռուստաընկերության մշակութային ծրագրերի բաժնում: Այսինքն՝ լուրջ ու բարձր գիտական-աստվածաբանական ասպարեզից հետո հայտնվում է զանգվածային մշակույթի կերտման կիզակետում և նույնիսկ դառնում դրա մասնակիցը:

Վաթսունականներին հեռուստատեսությունը որոշիչ դեր էր խաղում ճաշակի և հասարակական կարծիքի ձևավորման գործում: Փաստորեն, հեռուստատեսությանը և զանգվածային լրատվամիջոցներին (ՋԼՄ), որոնց նույնպես հաճախ էր անդրադառնալու իր գրական ու գիտական գործերում (այդ թվում նաև վերջին՝ «Համար գրո վեպում»), նա ծանոթ էր ներսից: Այս շարքից հետաքրքիր է «Մայք Բոնջոռնոյի ֆենոմենոլոգիան» (1961) էսսեն: Այս ոչ մեծածավալ գրվածքը հեռուստատեսության ազդեցության վերլուծության առաջին փորձերից էր, ընդ որում, արված դրա ծաղկման շրջանում՝ վաթսունականների սկզբին: Իտալական հեռուստատեսության հիմնադիրներից մեկի՝ հեռուստախաղերի ու զվարճալի հաղորդումների վարող Մ. Բոնջոռնոյի օրինակով Էկոն քննում և մեկնաբանում է ՋԼՄ-ների նոր իդեալի կառուցումն ու միտումը դեպի միջակություն: «Որպես իդեալ՝ հեռուստատեսությունը առաջարկում է բացարձակապես միջակ մարդու: ...Միլիոնավոր մարդկանց կուռք դարձած այս մարդը (Մ. Բոնջոռնոն) իր հաջողությամբ պարտական է նրան, որ հեռուստաէկրանների համար իր ստեղծած կերպարի ցանկացած գործողություն և ցանկացած բան

2 <http://www.epubbud.com/read.php?g=QZSX5QYA&p=66>

3 Umberto Eco veniva dall'azione cattolica e lo chiamavano “comunista”/http://www.farodiroma.it/2016/02/20/e-morto-umberto-eco-il-piu-grande-semiologo-italiano-scrittore-di-grande-successo-aveva-militato-nellazione-cattolica-lo-emarginarono-chiamandolo-comunista/

4 La parabola di Umberto Eco, dall’Azione Cattolica ad un ateismo “inquieto”/http://it.aleteia.org/2016/02/23/la-parabola-di-umberto-eco-dallazione-cattolica-ad-un-ateismo-inquieto/

ներծծված են բացարձակ միջակությամբ»⁵:

Ինչպես նկատում է Էկոյի կոլեգաներից մեկը, նա նույն կրքով գրում էր թե՛ Թովմա Աքվինացու, թե՛ Մայք Բոնջոռնոյի, թե՛ բարձր գրականության և թե՛ կոմիքսների մասին: «Բարձրի» և «ցածրի» համադրությունը միշտ ներկա է լինելու նրա և գիտական, և գրական կյանքում:

1962 թվականին լույս է տեսնում Ու. Էկոյի «Բաց ստեղծագործություն» աշխատությունը, որը, ի զարմանա հեղինակի, մեծ արձագանք է ստանում ոչ միայն Իտալիայում, այլև նրա սահմաններից դուրս: Այստեղ գեղարվեստական ստեղծագործությունը դիտվում է որպես ի սկզբանե ոչ միանշանակ հաղորդագրություն, որի ընթերցողը կամ կատարողը դառնում է դրա համահեղինակը: Իր դրույթները ներկայացնելու և առավել մատչելի դարձնելու համար Էկոն օրինակներ է բերում ոչ միայն գեղարվեստի, գրականության ու երաժշտության բնագավառներից, այլև դիմում է տեղեկատվության տեսությանը, հեռուստատեսությանը, կինոյին, մաթեմատիկային: Երեսնամյա գիտնականի այս ոչ ավանդական մոտեցումը միանշանակ չի ընդունվում ակադեմիական շրջանակներում: Դրա վերաբերյալ իտալացի գրաքննադատներից մեկն ասում է. «Անպեք այդ երիտասարդին, որ նա այնպես է բացում և փակում ստեղծագործությունը, ասես դա միջանցք է, քարտի կամ էլ ձախերի կառավարության խաղ»⁶:

1963-ին Էկոն մի քանի գաղափարակիցների հետ սկիզբ է դնում գրական “Gruppo 63” խմբին: Այդ տարիներին նեոռեալիզմի պոետիկան արդեն սպառել էր իրեն: Մյուս կողմից, Իտալիան տնտեսական զարթոնք էր ապրում: Խմբի նպատակը նոր պայմաններում Իտալիայի մշակութային բարեփոխումն էր, գրականությանը թարմություն, արտահայտչականություն հաղորդելը, սխեմաներից, կրկնվող թեմաներից ձերբազատելը: Խումբը երկար կյանք չունեցավ, սակայն որոշակի թարմություն հաղորդեց Իտալիայի մշակութային կյանքին և օգնեց բացահայտելու նոր անուններ գրականության և գրականագիտության մեջ:

Ինչպես արդեն նշվեց Էկոյի ավանդը մեծ է հումանիտար մի շարք գիտություններում: Թերևս առանձին հիշատակության են արժանի Էկոյի՝ նշանագիտությանը նվիրված աշխատությունները, ինչպես օրինակ՝ «**Բացակայող կառույց**» (1968), «**Lector in Fabula**» (1979)՝ «**Մեկնաբանության սահմանները**» (1990), «**Լեզվի նշանագիտությունն ու փիլիսոփայությունը**» (1984), «**Տրակտատ ընդհանուր նշանագիտության մասին**» (1984) և այլն: Ումբերտո Էկոն դասավանդել է մի շարք համալսարաններում, 1975-ին դարձել Բոլոնիայի համալսարանի նշանագիտության ամբիոնի ղեկավարը:

1960-ականներից Ու. Էկոն համագործակցել է իտալական առաջատար օրաթերթերի, ամսագրերի և այլ պարբերականների հետ՝ «L'Espresso», «La Repubblica», «Corriere della Sera», «La Stampa», «Sera», «Il Giorno»: Հետագայում նրա՝ մամուլում լույս տեսած հոդվածների մի մասը հրատարակվում է «Միներվայի տուփիկը» («Bustina di Minerva») համանուն հոդվածաշարի վերնագրով գրքում: Դժվար է գտնել որևէ կարևոր իրադարձություն կամ խնդիր, որին հեղինակն անդրադարձած չլինի: Որպես իսկական մտավորական՝ նա անտարբեր չէր միջազգային բեմահարթակում կամ Իտալիայում տեղի ունեցող իրադարձությունների նկատմամբ, լինել դա Խորհրդային Միության փլուզումը, ֆաշիզմի արտահայտությունները մեր օրերում, Բալկանյան պատերազմները, ներգաղթն ու արտագաղթը, թե Բեռլուսկոնիի՝ ըստ Էկոյի՝ կործանարար կառավարությունը: Իսկ երբեմն էլ Էկոն անդրադառնում էր ամենօրյա կյանքի դրվագների: Այս գրվածքները տարբերվում են մի կողմից խիստ և տրամաբանական կառուցվածքով, սեղմությամբ, դիպուկ եզրակացություններով, մյուս կողմից՝ պատկերավոր օրինակներով և նուրբ հումորով, որոնք սպառնում են դրանց ընթերցանելիությունը ընթերցողների լայն շրջանակի համար⁷:

5 Fenomenologia di Mike Buongiorno/ 1963 Arnoldo Mondadori Editore S.p.A., Milano p. 19.

6 <http://www.umbertoeco.it/CV/11%20Gruppo%2063,%20quarant%27annin%20dopo.pdf>

7 Այս գրվածքների մի փոքր մասը մոտ ապագայում լույս կընծայվի «Անտարես» հրատարակչության

Այսպիսով, Ուբերտո Էկոյի կյանքն ու ստեղծագործությունը ամբողջացնում են Իտալիայի վերջին տասնամյակների պատկերը՝ ֆաշիստական Իտալիա, հետպատերազմյան Իտալիա, կաթոլիկ Իտալիա, ձախակողմյանների Իտալիա (Էկոն տարվում է ձախակողմյան հայացքներով, սակայն որոշակի հիսթորիություն ապրում «Պրահայի գարնան» իրադարձություններից հետո, որոնց մասին ակնարկում է նաև «Վարդի անունը» վեպում), Սան Ռեմոյի և Մայք Բոնջոնոյի Իտալիա, Բեռլոսկոնիի Իտալիա: Այս ամենը փաստագրված է Էկոյի հիշողություններով, հողվածներով, գիտական ու գրական գործերով: Սա նման է Էկոյի գրքերից մեկի՝ «Թագուհի Լոանայի առեղծվածային կրակը» վեպի հերոսի պատմությանը, որը կորցրած հիշողությունը փորձում է վերականգնել ընդհանուր հիշողության օգնությամբ՝ թերթերի, գրքերի, կոմիքսների, բացիկների միջոցով:

«Նրա հետ մշակույթը դարձավ բեսթսելեր»,- գրում է “La Stampa” թերթը: Այս միաձուլումից, սակայն, կարծում ենք, շահեցին թե՛ մեկը, թե՛ մյուսը: Էկոն փորձեց մոտեցնել բարձր մշակույթը գանգվածայինին, որը նույնպես սիրում էր. «Զանգվածային մշակույթը հասկանալու համար պետք է սիրել այն»⁸, - ասում էր նա: Մյուս կողմից, Էկոն համոզված էր, որ գիտական աշխատությունները նույնպես կարող են և պետք է գրվեն այնպես, որ ընթերցողը դրանք կարդա դետեկտիվի նման: Էկոն նման կոչ է անում նաև մի շարք երկրներում մեծ ժողովրդականություն վայելող «Ինչպես գրել ավարտական թեզ» (1977) գրքում, ուր հեղինակը մի շարք գործնական խորհուրդների միջոցով փորձում է ուղղություն տալ ուսանողին:

Իսկ գիտականը գրականին, բարձր գրականությունը բեսթսելերին մոտեցնելու գործում զգալի դեր խաղաց նրա «Վարդի անունը» վեպը, որ պետք է վերջնականապես հաստատեր Էկոյի տեղը ոչ միայն գիտական, այլև գրական աշխարհում: Գիրքը լույս է տեսնում մեծ գաղափարների մայրամուտին, բուն ավանգարդիստական շրջանից հետո՝ 1980 թվականին: Այս պոստմոդեռնիստական վեպն իր բազմաշերտ կառուցվածքով, որն էլ ապահովում էր ընթերցողների լայն շրջանակ, անմիջապես դառնում է բեսթսելեր: Էկոն ապացուցում է, որ լավ գրված լուրջ վեպն էլ կարող է լինել կարդացվող՝ սպառողական հասարակության մեջ: Վեպի հրատարակությունից որոշ ժամանակ անց «Գրառումներ «Վարդի անունի» լուսանցքներում» գրքույկում հեղինակը նկարագրում է վեպը գրելու ընթացքը, բացահայտում դրա ստեղծման մեխանիզմի որոշ գաղտնիքներ՝ ընթերցողին տալով ուղղություն, իսկ ավելի հաճախ, իհարկե, միտումնավոր, միայն ակնարկում է՝ եզրակացությունը թողնելով վերջինիս: Այս վեպում կարծես տեղ են գտնում և նյութականանում Էկոյի գրեթե բոլոր հիմնական գիտական հետաքրքրությունները՝ միջնադարը, նշանագիտությունը, փիլիսոփայությունը, պատմությունը, աստվածաբանությունը: Ու չնայած հատկապես վերջին շրջանում Էկոն հաճախ էր կրկնում, որ «Վարդի անունն» իր ամենավատ վեպն է, թվում է, թե մի պահ մոռանում էր կամ ձևացնում, որ մոռացել է, որ, ինչպես ինքն է մեզ սովորեցնում, այդ տեքստն արդեն վաղուց ապրում է իր կյանքով, և նույնիսկ հեղինակի գնահատականը չի կարող փոխել դրա պատվավոր տեղը քսաներորդ դարի գրականության մեջ: Հուրախություն հայ ընթերցողի՝ վերջերս «Վարդի անունը» լույս տեսավ նաև հայերեն՝ Զ.Բոյաջյանի թարգմանությամբ և մեկնություններով:

Առաջին վեպին հետևեց ութսունականների Իտալիան պատկերող «Ֆուկոյի ճոճանակը» (1988), որի կենտրոնական թեմաներից է դավադրության տեսությունն ու դրա ծաղրը: Սրան հետևում է տասնյոթերորդ դարը պատկերող «Նախորդ օրվա կղզին» վեպը (1994): «Բաուդոլինո» (2000) վեպը, որում Էկոն ակնհայտ հաճույքով նորից անդրադառնում է միջնադարին, կարող է հետաքրքիր լինել հատկապես հայ ընթերցողին, քանի որ այնտեղ կա նաև հայազգի հերոս: Քննելով միջնադարը՝ Էկոն

կողմից՝ հայերենով:

8 <http://www.lastampa.it/2016/02/20/cultura/addio-a-umberto-eco-con-lui-la-cultura-divent-best-seller-Uwll8mAdbluPd6mx8Gv4CN/pagina.html>

մեզ հրավիրում է մտորելու նրա շուրջ, թե ինչպես և ում կողմից է կերտվում պատմությունը:

Ինչպես արդեն նշեցինք՝ «Լոանա թագուհու առեղծվածային կրակը» (2004) վեպում հիմնական թեմաներից է հիշողությունը: «Պրահայի գերեզմանոցը» (2010) վեպում Էկոն գործողությունների վայր է դարձնում իր սիրելի Փարիզը, իսկ հիմնական թեմաներից մեկը՝ հակասեմականությունը: Վեպում հանդիպում ենք նաև տասնիններորդ դարավերջի և քսաներորդ դարասկզբի մի շարք պատմական կերպարների: Հակասեմականության օրինակով նա ընթերցողի ուշադրությանն է ներկայացնում «թշնամու» կերպարը պատմության մեջ: Այս խնդրին է նվիրված նաև Էկոյի «Ստեղծել թշնամուն» (2008) գրվածքը, որի շատ դրոյթներ տեղ են գտնում վեպում: Մեկ տարի առաջ լույս է տեսել Էկոյի վերջին՝ «Համար գրո» (2015) վեպը, որը փոքր-ինչ տարբերվում է մյուսներից իր անհամեմատ փոքր ծավալով և նախորդ վեպերի համեմատ սյուժեի պարզությամբ: Այստեղ հերոսները հրատարակչության աշխատակիցներ են, բոլորն էլ՝ անհաջողակ, որոնք աշխատում են մի թերթի վրա, որը երբեք լույս չի տեսնի: Խոսքը իննսունականների մասին է, սակայն այստեղ էլ կարելի է ճանաչել հեղինակի սիրելի թեմաները՝ պատմություն, ԶԼՄ-ներ, դավադրության տեսություն և այլն:

Այս բոլոր վեպերին միավորում են պոստմոդեռնիզմին հատուկ խաղն ու հեզնանքը, պատմության վերաինաստավորման փորձը, ինտերտեքստուալությունը, դրանց մեծ մասում ամկա դետեկտիվային տարրը: Ինչպես Էկոն նշում է «Գրառումներ «Վարդի անունի» լուսանցքներում»-ում, ինքը ցանկանում է, որ կարդալով ու ճանաչելով հեղինակի կողմից թողած նշաններն ու ակնարկությունները՝ ընթերցողը զվարճանա: Այս վեպերն ասես հիպերտեքստ լինեն, որ տալիս են բազմաթիվ հղումներ և ստիպում ընթերցողին անդրադառնալ, ընթերցել կամ վերընթերցել այլ տեքստեր, որոնք ակնարկում է հեղինակը: Ինչպես և ենթադրում է պոստմոդեռնիստական գրականությունը, դրանք տալիս են բազմաթիվ մեկնաբանությունների հնարավորություն:

«Ընթերցողի դերը», – Lector in Fabula», (1985) աշխատության լրանշակված տարբերակում (որում մասամբ ներառված է նաև «Բաց ստեղծագործությունը») Էկոն վերլուծում է հեղինակի, տեքստի և ընթերցողի հարաբերությունները՝ առաջ քաշելով իդեալական ընթերցողի (Lettore modello) գաղափարը, որը ենթադրում է ոչ թե կոնկրետ ընթերցողի, այլ տեքստի ընկալմանը բավարարելու համար անհրաժեշտ «պայմանների ամբողջություն», և որին նկատի ունի յուրաքանչյուր հեղինակ տեքստ գրելիս: Ի տարբերություն սովորական ընթերցողի՝ այս իդեալական ընթերցողը տեքստն ընկալում է խորապես և հնարավորինս մոտ նրան, թե ինչպես է դա պատկերացրել հեղինակը: Այլ առիթներով Էկոն նշում է, որ տեքստ գրելով՝ առաջին հերթին ձևավորում ես այն ընթերցողին, որին ցանկանում ես տեսնել քո տեքստն ընթերցելիս: Այսպես, իր վեպերի, հոդվածների և գիտական աշխատությունների միջոցով Էկոն ցանկանում էր կերտել ուշադիր, պրպտող, մեկ մեկնաբանությամբ չբավարարվող, պատմության դասերը չհռոացող, հեղինակի խաղին ակտիվորեն մասնակցող ընթերցողի, որը գիտակցում է, որ գրքերը երկարացնում են մեր կյանքը, ինչպես վկայում է Էկոյի խոհագրություններից մեկը:

Մշակույթն արդիականացրած կամ բեռնակր դարձրած Էկոյի միտքը զարմանալի ձկուն էր, այն երբեք չկարծրացավ ու չկաղապարվեց: Նա ասես միշտ մի քայլ առաջ էր ժամանակից: Էկոյի հիշողությունն ու գիտելիքները գրեթե առասպելական են թվում, իսկ դրանք կիրառելու և համադրելու ունակությունը՝ բացառիկ: Նա երբեմն նմանվում է բորխեսյան իմաստունի, որը կախարդական կերպով գիտի ամեն ինչ և միշտ ունի պատասխաններ, իսկ նրա խորամանկ ժպիտը դեռ երկար է ուղեկցելու մեզ գրական ու գիտական ճանապարհորդություններում:

Հասմիկ Ա. Եղիազարյան – 2010-ին պաշտպանել է ատենախոսություն «Միջնադարի հայեցակարգը Ու. Էկոյի ստեղծագործության մեջ (ըստ «Վարդի անունը» և «Բառուդոլին» վեպերի)» վերնագրով: Գիտական հետաքրքրությունների շրջանակը ներառում է իտալական գրականությունը, լատինամերիկյան գրականությունը, պոստ-մոդերնիզմը և այլն:

Summary

THE LAST GREAT THINKER OF EUROPE

In memory of Umberto Eco

Hasmik A. Yeghiazaryan

Key words: U.Eco, Middle Ages, postmodernism, intertextuality, irony, mass media, bestseller

The article deals with the scientific and literary activity of the highly admired Italian philosopher, linguist, medievalist and writer Umberto Eco who passed away recently. His literary and scientific works discuss a large number of issues that include not only such disciplines as philosophy, history or aesthetics but also mass media, comics, etc. The appearance of his books such as “The open work”, “The role of the reader, Lector in Fabula” or novels like “The Name of the Rose”, “The Foucault pendulum” marked a new era not only in the Italian but also in the world postmodern literature and human sciences.

Резюме

ПОСЛЕДНИЙ ВЕЛИКИЙ МЫСЛИТЕЛЬ ЕВРОПЫ

Памяти Умберто Эко

Асмик А. Егиазарян

Ключевые слова, У.Эко, средневековье, постмодернизм, интертекстуальность, ирония, игра,СМИ, бестселлер

Статья посвящена научной и литературной деятельности всемирно известного философа, лингвиста и медиевиста Умберто Эко, недавно ушедшего из жизни. В своих многочисленных работах он поднимал и исследовал актуальные проблемы не только философии, истории, эстетики, но и современных средств массовой информации, комиксов и т.п. Появление ряда его произведений, таких как “Роль читателя”, “Открытое произведение”, романов “Имя розы”, “Маятник Фуко” ознаменовало новый этап не только итальянской, но и мировой постмодернистской литературы и критики.